

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՍԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Ա. ՆԵՐՏԻՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ներսիսյան.

Ի պատասխան Ձեր **28.12.2018թ. հ.01/31Մ** գրության՝ տեղեկացվում է.

«Քաղաքացիական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից **20.01.2016թ.**-ին տրված **հ.13/05** տեխնիկական եզրակացության՝ Արցախի **4-րդ** նրբանցքի **հ.10** հանրակացարանային շենքը հանդիսանում է **4-րդ** կարգի վթարային, ինչի պարագայում առկա է փլուզման իրական վտանգ: Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային բազմաբնակարան, հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու և այդ շենքերում գտնվող ոչ բնակելի տարածքների սեփականատերերին փոխհատուցում տրամադրելու աշխատանքներն իրականացնելու նպատակով Երևանի քաղաքապետի **14.11.2018թ. հ.3411-Ա** որոշմամբ ստեղծվել է հանձնաժողով: Վերոհիշյալ շենքի բնակիչների վերաբնակեցման գործընթացի շրջանակներում նախատեսվում է առաջնահերթ բնակարաններ տրամադրել այն ընտանիքներին, որտեղ բնակվում են անչափահաս երեխա (երեխաներ) կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշմանդամության կարգավիճակ ունեցող անձ (անձինք): Այն քաղաքացիներին (ընտանիքներին), որոնց նախատեսված առկա բնակարանային ֆոնդի սպառման արդյունքում հնարավոր չի լինի նշված եղանակներով վերաբնակեցնել՝ առաջարկվում է տեղափոխվել անվտանգ կացարան, ընդ որում, Երևանի քաղաքապետարանը հայտնում է պատրաստակամություն՝ բնակարան վարձակալելու դիմաց կատարել վճարում **1 (մեկ)** ամսվա համար մինչև **70.000 ՀՀ** դրամի չափով՝ մինչև հիմնական բնակարանի տրամադրումը: Կնքվող վարձակալության պայմանագրերով Երևան համայնքը կստանձնի պարտավորություն՝ Միսակյան **հ.3** շենքում բնակֆոնդի կառուցման և շահագործման հանձնման ավարտից անմիջապես հետո սեփականության իրավունքով վերաբնակեցվող բնակարանների դիմաց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել բնակարաններ՝ մինչև այդ վճարելով համապատասխան վարձավճարները: Նշված գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ կլինի ստանալու շենքի բոլոր բնակիչների գրավոր համաձայնությունը և տարածքները փաստացի ազատել, որի պարագայում միայն կարող է վարձակալվող բնակարաններ տեղափոխվող անձանց հետ կնքել պայմանագիր, համաձայն որի՝ Միսակյան **հ.3** հասցեում կառուցվող շենքից հնարավոր կլինի տրամադրել համապատասխան վկայականներ: Հաշվի առնելով հարցի կարգավորման կարևորությունը, տեղեկացվում է, որ շենքի բնակիչների վերաբնակեցման հարցը գտնվում է ուշադրության կենտրոնում և աշխատանքներ են տարվում գործընթացը հնարավորինս արագ կազմակերպելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է նշված հասցեի բնակիչներին առողջապահական հարցերում օժանդակելու վերաբերյալ Ձեր հարցադրմանը, տեղեկացվում է, որ, հարցի կարգավորման նպատակով «Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրենին հանձնարարվել է Արցախի փողոցի 4-րդ նրբանցքի հ.10 շենքը սպասարկող տեղամասային թերապևտի հետ այց կատարել նշված հասցեի բնակիչներին, ծանոթանալ բոլորի առողջական խնդիրներին, բնակիչներին ծանոթացնել իրենց իրավունքներին՝ վերջիններիս մատուցել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ: Քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչությունն իր լիազորությունների շրջանակներում պատրաստակամ է աջակցելու բնակիչներին՝ անհրաժեշտ բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու հարցում, ինչի մասին տեղեկացվել են վերջիններս:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ